



Ա Մ Ս Ա Գ Ի Բ

ԿՐԾՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻԻ Ե. — ՏԵՐԻ Գ.

1871

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30:

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ՑԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԻ*)

Կ Ա Մ

ԽԱՐԴԱՆՔԸՆԴ ԱՆՈՒԱՄՔ ԲԵՐՄ. ԿՐՕՆԻ

Վրխտոնէական Կրօնն՝ — որ Աստուծոյ նախասահմանուած էր ի յաւիտենից՝ մի-

միայն ամենակատարեալ և՛ ճշմարիտ և՛ անմոլար ճանապարհ Աստուածածանօթութեան, որով միայն կարելի էր ճանաչել զԱստուած և պաշտել նորին սուրբ կամքերը, և Միածնի շնորհիւ մարդկային ապականեալ բնութիւնը սրբելոյ պատուիրանը՝ այսինքն է յետ ըստ մարմ-

(*) Անձնական տխրութեանս պատճառաւ յետաձգեցաւ սոյն այս յօդուած, ուստի կը յու-

սամ ընթերցողացս ներողութեամբ արժանաւորեալ:

նոյ ծննդեան՝ վերստին ծնանիլ նաև ի Հոգւոյն սրբոյ, և յետ փոխելոյ յաստեացրս՝ ժառանգ և որդի լինել յաւիտեանական անմահ և երջանիկ կենաց, — իսկզբան տարածմանն այնպիսի սքանչելի արդիւնք ունեցաւ, որ նախնի հաւատացելոց օր ըստ օրէ յաւելանալով ի թիւս՝ միանգամայն նորին սրբութիւնը՝ պարզութիւնը և ճշմարիտ քրիստոնէական ընթացքները մեծապէս իմն համակրութեամբ փառաւորել կը տային զայն ընդ ամենայն տեղիս հիթանոսաց անդամ։ Աւ այսպէս անուն ճշմարտին Աստուծոյ և Ս. Երրորդութեան յամենայն լեզուս պաշտելի և երկրպագելի փայլեալ կը հանդիսանայր։

Ենչուշտ՝ առաքելաբ ի մի աղբիւրէ ընկալան, և ի մի հիմէ ստացան քրիստոնէութեան վարդապետութիւնքը և այլ կարեւոր հրահանգները, զնոսին նաև յետ համբարձմանն Վրիստոսի՝ կը քարոզէին հաւատացելոցն Վրիստոսի յաշխարհ ամենայն, և ի պահանջել հարկին Հոգւոյն սրբոյ ներշնչութեամբ առաքելական ժողովովք՝ նաև կ'անօրինէին Ակեղեցւոյ օգուտները և բարեկարգութիւնները։

Ո՞վ կարէր կամ ո՞րք յառաքելոց ինքնին կ'իշխէր Ակեղեցւոյ մէջ մի փոփոխութիւն առնել, կամ յաւելուլ և կամ պակասեցնել ինչ առանց խորհրդոց և առանց համահաճութեան միմեանց։ Ո՞չ որ մտաբերէր զահելոց կամ առաքելապետ հանդիսանալ, ինքնուրոյն և անձնահաճոյ վճիռներ արձակել, պատգամներ որոտալ ևն։

Ապտէն Վրիստոնէական կրօնի սկզբնաւորութեան այս սուրբ և պանծալի ոգին յարաաւեց ընդհանուր Առաքելական

Ակեղեցւոյ մէջ մինչ ցերրորդ դար կամ առաւելն հաղիւ ցըրրորդ դար՝ ցորչափ նախագահութեան բռնապետական իշխանութեան անտեղի խորամանկութեանց և անպարզութեան նախանձը և փափագը հեռի էր ի յաջորդացն Առաքելոց, կամ թէ այսպէս խօսենք, իւրաքանչիւրն յարգէր իւր և ընկերին զպաշտօն և զիշխանութիւն և՛ զԱկեղեցին, և հաւասար իրաւունք և պատիւ կը տիրէր ի մէջ իւրաքանչիւրոցն։ Թէև և ի նոյն միջոցս չորից դարուց իսկ հերձուածք և մոլորամիտք երևեցան յԷնդ. Ակեղեցւոյ, այլ ժողովք և մեծաջան փոյթք Առաքելոց և Յաջորդացն քննելով նոցին մոլորութիւնքը ևն. հերքեցին և անհետացուցին։

Առաքելական յաջորդք Վրիստոսահիւմն Ակեղեցւոյ, — զոր թէպէտ միով դաւանութեամբ և հաւատով՝ այլ ի բազում ազգաց և յայլ և այլ ցեղից բաղկացեալ եկեղեցիք կը կազմէին՝ և մի եկեղեցի կը համարուէր, հանդոյն առաքելոց՝ որք աւանդութեամբ ի Վրիստոսէ ընդունած՝ և սոքա յառաքելոց՝ Ակեղեցւոյ հաւատալիքը և արարողութիւնքը և սովորութիւնքը ըստ մեծի մասին, և ի պահանջել հարկին գովելի իմն եղբայրսիրութեամբ և խոնարհամտութեամբ առանց քամահելոյ զմիմեանս, առանց ըզմտաւ ածելոյ և տքնելոյ իբր յաջորդ այս ինչ կամ այն ինչ առաքելոյ՝ Առաքելապետ ձևանալոյ, առանց զանձինս անսխալ իբրև զԱստուած քարոզել երազելոյ, առանց զմիմեանս զրկելոյ ի հաւասար իրաւանց և յիշխանութեանց ի վերայ եկեղեցեաց իւրեանց՝ ի միմեանց կ'ուսանէին

զհարկաւորսն հարցանելով : Իսկ եթէ մերթ ընդ մերթ գէպքն և պէտքն վսեմ և ծանր լինէին, ի մի ժողով գումարիչ կը հրաւիրէին ղմիմեանս, ուր քննութիւն բանալով՝ վիճարանելով ի վերայ առաջարկեալ որպիսի և իցէ խնդրոյ, ի վերջոյ համաձայնութեամբ բաղմութեան ձայնից կը լուծուէր՝ կը վճռուէր, և կարգադրուելով կամ օրինադրուելով կ'հրատարակուէր յամենայն եկեղեցիս ի գիտութիւն հաւատացելոյ :

Աւան, այս սուրբ սէրը, այս ճշմարիտ քրիստոնէութեան պարզ և մաքուր ոգին անյայտ բանասարկութիւն նախանձը զրգռեց, անցաւ ի մէջ սրտից մոլորամիտ անձանց ոմանց, և ահա եկեղեցւոյ մէջ ի վեր երեւեցան առաւել ևս վտանգաւոր որոմնացան սալայէիներ, որոց երեւելիք և անուանիք են չորրորդ դարու կիսէն սկսեալ՝ Նեստոր, Սակեդոն, Աւտիքէս, Ապողինար, Յուլիանէս և այլ հերձուածողք և աղանդապետք, որք եկեղեցւոյ սուրբ միութիւնը խզելով զայն խանգարել, և գայթակղել և հոգեկորուստ վարդապետութիւնք հնարել ջանացին ի նմին :

Ի այց քան զայսոսիկ առաւել ցաւալին այս է, զե ընդհանուր եկեղեցին հետզհետէ իշխանասէր և առաքելապետական ծաղրելի մտաց հետեւող ոմանց գլխոց շնորհիւ՝ նախկին սուրբ միութիւնը՝ պարզութիւնը և այլ ինչ ինչ կարեւոր յատկութիւնքը կորուսանելով, նաև բաղդի բերմամբ հզօրագոյնքն սկսան թեկնածել այլ առաքելական յաջորդութիւնքը խոնարհեցնել ընդ իշխանութեամբ իւրեանց. և այս նպատակաց հասանելոյ բաղձանօք՝ Քրիստոնէական կրօնի անուան ներքե խարդա-

ւանօք ծաղտելով և կեղծելով՝ արդեօք մնացի՞ն չարիք, մոռացան ատելութիւնք, պակսեցան խռովութիւնք, զորս չէին նիւթած տկար ազգաց եկեղեցեաց դէմ, մինչև անգամ իւրաքանչիւրը միայն զիւրն կժպրհէր համարել ճշմարիտ քրիստոնէութիւն և զեկեղեցի, իսկ ղմիւսն կամ զընկերինն խրկել կ'սպառնար ի դժոխքս և այս առիթներով ոչ միայն կ'հաւածէին, այլ մինչև անգամ ի մահ մատնէին արտաքոյ իւրեանց իշխանութեան զտնուած եկեղեցեաց անդամքը կամ որդիքը :

Այսպիսի ուրեմն ջանքերով և՛ մարդահնար վարդապետութեամբք՝ և հետզհետէ առաւել ևս ծանր և կնճռալից խնդիրներով մուծուեցան տարբերութիւններ և յարատեւեցին և կը յարատեւեն ինչպէս ցարդ (քրիստոնէական կրօնի մէջ). տարբերութիւնք՝ որով միեւնոյն Քրիստոսը հաւատացող, պաշտող և երկրպագող քրիստոնէից, եթէ անձնիւր բարձր և աշխարհասէր մտաց չխոնարհէին հլութեամբ, կրկին մկրտութիւն են. չստանային, անհնար էր արքայութեան ժառանգորդ լինել, (ինչպէս կ'անդեն չարամիտ հակառակորդք), տարբերութիւնք՝ որ որոմնացան և անտի—քրիստոնէական՝ բոյց ի ժամանակին ազդեցութիւն և մեծ իշխանութիւն ունեցող անձանց ըստ կամս այլ և այլ նորագիւտ վարդապետութեամբք ծագելով՝ որոց իւրաքանչիւրքն առանձին կը վճռէին ըստ հաճոյիցն այսպէս կամ այնպէս՝ արտաքոյ մասնակցութեան ընդհանուր եկեղեցւոյ, զոր կը քարոզէին հաւատոյ մաս, միանգամայն առանց զայն հաւատալոյ չէք փրկութիւն

հոգւոյ, կարելի չէ արքայութիւն հասնել հրատարակելով և պնդելով :

Այս ամենն աւելի միջին դարերէն քիչ առաջ սկսանելով՝ դամքան զգամ և միմեանց հակառակ ծիւղէ ի ծիւղ և ոստէ յոստ յաւելացան՝ ոմանք ստուար զիրք բռնած զօրանալով և բազմանալով, ոմանք տկարանալով : Այսպէս ի վեր երեւցան Ակեղեցւոյ կարի փաստակար Առաքել, Ապղին և այլք ևս, որոց իւրաքանչիւրն գողցես՝ ինչպէս կը պարծին ինքեանք՝ բողոքելով ընդդէմ Ակեղեցւոյ իրրեւ ճշմարտութեան ախոյեաններ՝ անջատուցան Ղնդհ. մի՛ սուրբ և առաքելական Ակեղեցիէն՝ թէ և զՂնդհ. Ակեղեցին կազմող մասնաւոր Ակեղեցեաց միջէն ծագումն առնելով, և առանձին հերձուածք և աղանդներ յօրինեցին, սակայն անշուշտ իւրաքանչիւրն կը տքնէր և կը տքնի զինքն ներկայացնել ճշմարտութեան հետեող՝ ճշմարիտ Վրիստոնեայ և արքայութեան արժանաւոր որդի՝ թէ և բազումք ի նոցանէ չճանաչեն զԱստուած անգամ . . . : Ըստ իւրաքանչիւրոցն հակասական կարծեաց՝ ներքեւ և կարելի չէ արտաքոյ իւրեանց այս կամ այն ժողովոյ՝ փրկութիւն հոգւոյ դտանել ևն :

Բայց ստոյգը քննելով՝ ընդհանրապէս կեղծ գաղափարներ և անձնահաճոյ և ծուռումուռ նպատակներ կը քողարկէին իւրաքանչիւր աղանդապետք՝ աղանդք և զլեւոր կուսակիցքն, յորս մանաւանդ ինչպէս ի հնումն, նոյնպէս ի նորումն (այժմ) քաղաքական նկատմունքներով ինչ ինչ խարդաւանանք կը պարունակէին, և եթէ թերադիրքն չամաչէին կամ իւրեանց բուն ներքին մտաց քօղը մեկուսի

դնելով յայտնապէս կարողանային՝ մինչև անգամ կը յանդգնէին իրրեւ Վրիստոսի վարդապետութիւնք քարոզել զայնոսիկ ևն : Եւ մի՛թէ տակաւին նոր վերջին 2—3 դարուս միջոցներում ակնյայտի յաշխարհ ամենայն չհռչակեցան. ոչ ապաքէն մինն քաղաքական ազդեցութեամբ և մարդ գողով՝ կամեցաւ Աստուածացնել զանձն, որ ի՞նչ տարբերութիւն ունէր Նաբուգոդոնոսորէն, Ներսիսիցէն, որով և զազգս ամենայն ի մի գաղափար ձուլել կը տքնէր. իսկ միւսն՝ որ իրր թէ աւելի պարզասէր և լուսաւորեալ կեղծելով զինքն՝ բայց աւելի յետադիմութեամբ իւր զրացիէն ռիս և վրէժ առնլոյ համար՝ ազօթքները խաղալիք կը շինէ, իւր ազգը իրրեւ միակ Աստուծոյ ընդունածը ձեացնելով, իսկ զզրացին՝ իրր Աստուծոյն առեւել՝ դժոխոց որդիք, նոցա վրայօք ազօթքներ կը յօրինէ և մինչև անգամ ուսումնառու մանկանց առհասարակ բերան անելոյ և բարեմաղթելոյ համար մեծ իմն և անհրաժեշտ պարսաւորութիւն կ'հրատարակէ :

Աւրեմն այս է ճշմարիտ վրիստոնէութիւնն, այսպէս կ'աւհանջէ, այսպէս պէտք է եղած Վրիստոսի պատուիրանքները քարոզել և կատարել. այսպէս զիտնալով զվրիստոնէութիւնն՝ զայլ եկեղեցիս ատելի և դուռն դժոխոց պէտք է ընդունել :

Ո՛հ Աստուած իմ, տես թէ՛ մարդիկ որպէս կը մեկնեն քո սուրբ՝ պարզ և հոգեկեցոյց պատուիրանքները : Մարդիկ՝ գործիք բռնելով քո աւանդած սուրբ կրօնը և հաւատքը, քո հաստատածդ Ակեղեցւոյ մէջ քանի՛ տարբերութիւնք, քանի՛

դայթակղուծիւնք, որչափ զեղծմունքներ կը յաւելուն, և եղբայր զեղբայր կարհամարհէ, կանարգէ, և ամենայն նախատինք կսպառնայ, քո սուրբ՝ և պաշտելի անուամբըդ բազում մարդիկ կը յառաջանան, և իւրաքանչիւրն միայն զիւր եկեղեցին կամ զաղանդն կճանաչէ և կը տքնի ծանաշել տալ, ճշմարիտ աշակերտ քեզ և հետեող, և նմին խոնարհեցնել այլ Ակեղեցիքը, և զայն տարածել յաշխարհ ամենայն:

Ահ, ողբալի՜ վիճակ:

Եւրդ աստ թէպէտ անօգուտ չ'ընենք նրկարարիւն քրիստոնէական կրօնի մէջ այլ և այլ ազգաց ի հաւատս և ի դաւանութիւնս դանուած տարբերութիւնքը և զանազանութիւնքը, բայց մեզ առաւել օգտաւէտ և կարեւոր է Վրիստ, կրօնի անուամբ նիւթեալ խարդաւանութեանց վերայ ակնարկել՝ յիշելով և օրինակ բերելով մասնաւորապէս Հայաստանեայց Ա. և Առաքելական Ակեղեցին և նորա ի նախնեաց հետէ յայլ ազգաց կրած անցից ոմանց համառօտութիւնը՝ բովանդակելով մեր յօդուածը՝ ինչպէս մեր նպատակն է՝ նոյն Ակեղեցւոյ ներկայ և ապագայ վիճակին վերայ:

Թող մտաբերեմք առ ժամ մի Աիռ-Մանուէլի և Աերսէս Հնորհալոյ յաւուրսն անցած ջանքերը:

Թող յիշեմք ի ժամանակս Պետրոս Պետադարձի ի Պօլիս անցած դէպքերը:

Թող խորհիմք մեր Ուրբէնեանց ձուլութեան միջոցին Պապերուն մերթ ընդ մերթ՝ չասեմ շարունակ՝ ի գործ դրած ճգնաց վերայ՝ զազգս համայն լատինացնելոյ երեւակայութեամբք:

Աւերջին դարուց վերայ չկամիմք ակնարկել, որոց մէջ ազգակործան փոյթք ոսոխաց պարզագոյնս ակնյայտնի կը նշմարուին: Սակայն կարեւոր է ներկայ դարուս գէթ վերջին 20—30 տարիներու վերայ մի հայեացք թողուլ, յորս պիտի նկատեմք, թէ որքան հակաքրիստոնէական ընթացքներ երեւցած են, և որպիսի որոգայթներ լարուած են նոր աշխարհի առաքեալներէն՝ Վրիստոնէութիւնը վահան և գործիք բռնելով ի ձեռինս՝ զխաւորապէս արեւելից մէջ մեր ազգի և Առաքելահաստատ սուրբ Ակեղեցւոյ ընդդէմ: Մինչդեռ ինքեանք ընդհանուր եկեղեցւոյ վարդապետութիւններէն հեռացած առանձին աղանդ կը կազմեն, մինչդեռ վեշտասաներորդ դարու դրիթէ կիսէն սկսեալ մի աղանդի մէջ գլորուած և թաղուած են, գոզցես Վրիստոսէն շարունակութիւն ունեցող մի եկեղեցի ձեանալով, և իւրեանց հաւատալեքները և կրօնական ամենայն ինչ իբր թէ Վրիստոսէն ուղղակի ընդունած՝ սարսափելի և աննկրելի մեծ տարբերութիւնք կ'երագեն Քնդհ. Ակեղեցւոյ և իւրեանց աղանդի մէջ, (և իրօք այնպէս է՝ զոր մեք իրաւունք ունիմք ասել,) ուստի և նոր իմն Վրիստոսիւ քրիստոնէութիւն քարոզելով՝ յուղղութիւն և ի ճշմարտութիւն կը տքնին առաջնորդել ընդհանուր եկեղեցւոյն:

Իայց եթէ կամենամք խորը թափանցել նոցա տքնութեանց, դիւրաւ կարեմք նշմարել նոյնպիսեաց քաղաքական նպատակները, ուստի և ազգութեանց համար փաստակար և կորուսիչ որոգայթները: Ասանորոյ ի նոցանէ կարելի է երբէք

սպասել հոգւոյ փրկութեան վարդապետութիւնը:

Ըստ արժան է առժամանակ մի կանգ առնուլ, և մեր ներկայ և ապագայ կենաց դասերը անցեալէն քաղել: Հարկ անհրաժեշտ է մեզ՝ Հայոցս՝ մակարերել՝ թէ մեր ազատասէր և հաւաստեալ քրիստոնէութեան բուն աշակերտ եկեղեցւոյ պարզութիւնը և ընդհանուր II. եկեղեցին բաղկացնող մասնաւորաց պատիւը պահելը և իրաւունքը ճանաչելը՝ թէ և գովելի՝ թէ և նախանձելի է, բայց այնու ամենայնիւ շրջանկատ հեռատեսութիւն պէտք է՝ որպէս զի փաստակար հետեանաց չհանդիպիմք հզօրագունից առաջ և, որք միշտ շրջապատած են զմեզ, և դժբաղդաբար բաղմնութիւ ևս են՝ թէ և բազումք տարաշխարհ ի մէջ: Ըստ իբրեւ բարեկամ և կարեկից՝ որպէս ծպտեալ կերպարանօք՝ նոյնպէս և աղուէսաբար և գայլաբար իւրեանց դարշելի և զղուելի հոտերը իբր ի գերեզմանի թաղեալ հոգւով կը մերձենան մեզ, քանի՜ քաղցր խօսքեր, օգտաւետ խրատներ, բարեացակամ պատուէրներ աւանդել կը տքնին իբր թէ ընկերասիրութեամբ շնորհելով մեզ, կը խղճան մեր հոգւոյ կորստեան համար, և կ'աշխատեն զմեզ ազատելոյ բաղձանօք հնարքներ ի կիրառնուլ՝ մինչդեռ ըստ առածին՝ ոչ կարէ ծառ չար՝ պտուղ բարի առնել, և թէ անհնար է դժնեկին թուղ բուսուցանել, և հնդիկին փոխել իւր սևութիւնը, և կշռելով նոյնպիսեաց ազգային և կրօնական զարգացումները և կրթութիւնները՝ կարելի է հաւատալ՝ որ նոքա վերջ ի վերջոյ մեր ազգութեան և եկեղեցւոյ ջնջման տապար և հարուած չպիտի

տան կամ տալոյ չտքնին զցայգ և զցերեկ:

Ապաքէն Հռովմէական Հայոց անցքեր թող ապացոյց և օրինակներ հանդիսանան մեզ: Նոքա երբ կ'անջատուէին և կը հերձուէին Հայաստանեայցս մայրենի եկեղեցւոյ ծոցէն, եթէ քառորդ մասը հաւաքակաւորութեամբ՝ գէթ երեք մասը միամտաբար խաբուած իբրու հոգւոյ փրկութիւնը միմիայն Հռովմէական եկեղեցւոյ մէջ գտանելու ակնկալութեամբ՝ անկան Պապապաշտից որոգայթից մէջ, որով ընականաբար հետզհետէ կրօնական և ազգային ծէսերը՝ և սովորութիւնք և յատկութիւնք մոռանալով, օտարին զգոյշ և գաղտնածածուկ հնարքներով, և ալժամ զի՞նչ, այսպիսի դարուս մէջ կ'առաջարկուի ինքեանց՝ խաղառ ուրանալ ազգային լեզուն, արարողութիւնք, և յատկութիւնք թէ եկեղեցեաց մէջ և թէ՛ արտաքոյ, միով բանիւ՝ պարզապէս լատինա՞նալ, և միանալ ընդ Ղաթինս և զամենայն ինչ և վէճ վերջացնել:

Թող կենդանի ապացոյցներ և օրինակներ լինին մեզ նաև Ղուտերական Հայք: Նոքա ևս երբ բաղդախնդիր բողոքական քարոզիչներու—չեմ ասեր առաւել կարմիր ոսկիներէն,—էբէ մեղրածորան և ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ազատաբոյր քարոզներէն խաբուելով՝ ուրացան և հեռացան իւրեանց մայրենի եկեղեցիէն, և թաղուեցան նոցա աղանդոց մէջ, յիտ ժամանակաց տեսին ոմանք յառաջակայ վտանգը և գուշակեցին զապագայն, ուստի արթննալով՝ երբ կը ջանան ազգային զգացումը վահան բռնել և անկեալ որոգայթներէն զերծանիլ, սկսան քարոզիչքը դրե-

Թէ շատ տեղեր անուղղակի նեղել զնոսա
և հալածմունքներ հանել երբեմն իւ-
րեանց իրելի ժողովրդեան ընդդէմ, ար-
տաքսել զնոսա լուսերական ժողովարան-
ներէն, և երբեմն նուիրահաւաքութեամբ
շինեալ հասարակաց շէնքերը ինքեանց սեպ-
հականնէ՝ ջանալով մերազնեայքը ի նեղ
արկանել: Առջաւ րաղում հնարիւք կա-
րողացած են արդէն բաւական Հայ գաղ-
թականներ տանել յԱմերիկայ, որոց զա-
պադայն գուշակել դժուար չէ (զոհ եմք՝
զի անդ ևս դժուր թիւնք և խոռովութիւնք
տիրած են ընդ մէջ քարողչաց և Հայոց
Լուսերականաց, յորոց ոչ սակաւքն վե-
րադարձած են ի հայրենիս):

Եստանօր կարեւոր են յիշել նաև եր-
բեմն խաբուած յունադաւան Հայքը, նոյն-
պէս Հունգարիոյ մէջ գտնուած մանա-
ւանդ Լեհաստանի Խլով քաղաքի և շուր-
ջակայից Հայերը: Աւել, այժմ նոցա յի-
շատակները և եթ կ'մնան պատմութեանց
մէջ, իսկ ինքեանք և սերունդքն անհետա-
ցած են Յունաց, Լատինաց, Լեհաց և այլ
ազգաց մէջ:

Ներկայ դարուս մէջ Կրօնական աղա-
պառ-նէան կը քարոզեն մի քանի հզօր ազ-
գաց ժողովներ . . . բայց զայս տկար ազ-
գաց և եկեղեցեաց համար պէտք է իմա-
նալ և ոչ հզօրագունից: Այո՛ Կրօնական
աղապառ-նէան լոկ երկու բառերով զմիա-
միտս խաբելով լուսաւորեալ կարծեցեալ
ազգեր մեծ գումարներ կը վասնեն, յամե-
նայն կողմանս քարոզիչներ կը յղեն, որք
փողով գրաւելով և խաբելով աղքատ-
ները և կարօտեալները, տունէ տուն կը
մտանեն, ինքեանք լինելով մոլորեալ և նո-
քաղանդ՝ իսկ մանաւանդ հալածող Կրօնական

աղապառ-նէան՝ կ'անարդեն զայլ կրօնս և զե-
կեղեցիս, ամենայն զրոգարուութիւնք և
վատ կարծիքներ կը բարդեն նոցա վերայ,
ամենայն տեսակ խռովութիւնք կը ձգեն
ընտանեաց մէջ, ատելութեամբ կ'խռովեն
զեղբայր ընդդէմ եղբօր, զկիներ ընդդէմ
առն, զորդին ընդդէմ ծնողացն, որով
բազմիցս կազ և կռիւ, ասեղութիւն և
խռովութիւն, արիւնահեղութիւնք և մար-
դասպանութիւնք անգամ կը լինին քա-
ղաքաց և զիւղօրէից մէջ: Ահաւասիկ
կրօնական ազատութիւն քարոզուած ներ-
կայ դարուս մէջ կը գործունին սոքա լու-
սաւորեալ կարծեցեալ մի քանի եւրոպա-
կան . . . քարոզիչներէ:

Արդ այսպիսի վիճակի մէջ՝ կը կրկնեմ՝
մեր Հայաստանեայց աւաքեւական և քը-
րիստոսահիմն սուրբ եկեղեցւոյ ողջամիտ
ազատասէր և եղբայրասէր յատկութիւնքը
որքան գովելի և պանծալի են համայն աշ-
խարհի առջև, այնու ամենայնիւ մեր ազգի
ներկայ և ապագայ վիճակը անհրաժեշտ
պահանջմամբք և շրջանկատ հեռատեսու-
թեամբք քրիստոնէական կրօնի մէջ ձեռ-
ցող տարբերութեանց համար պէտք է հար-
կադրէ զմեզ անտարբեր չմնալ իսպառս-
պուռ: Մի տանուտէր պէտք է անտարբեր
կենայ մի այնպիսի դատի նկատմամբ՝
յորմէ կախում ունի իւր ընտանեաց պահ-
պանութիւնը: Ներկի՞ն է զորապետի մի-
ում անտարբեր մնալ մի պատերազմական
այնպիսի գործողութեան նկատմամբ՝ յոր-
մէ կախում ունի իւր բոլոր պատերազմին
յաջողութիւնը: Մեր Ազգի և Ազգեղացոյ
յարասեւ և պայծառ շարունակութեան և
յառաջադիմութեան համար և նոցա ընդ-
դէմ մաքառող տարերաց և սերնդոց յա-

բուցած բարոյական և մեր Ազգ. և Ազգե-
ղեցւոյ գոյութեան ի վտանգ ազդի ազդի
և աղէտասփիւռ մարտից մէջ անձնանուէր
ախոյեան հանդիսանալ ո՞չ ապաքէն մեր
քաղցր և անհրաժեշտ պարտքն է: Մինչ-
դեռ հակառակորդը իրաւունք ունի իւր
սերնդին համար ամենայն ձիգ և զոհորու-
թիւն շռայլել՝ որպէս զի որսան զմեզ իւ-
րեանց ցեղին փարախին մէջ և միապա-
ղաղեն ի նմին, միթէ մեք անիրաւ պէտք
է լինիմք՝ երբ մեր Ազգ. և Ազգե. գոյու-
թեան համար մեր պարտքը և իրաւունքը
գործադրելոյ աղաճաւ մեր զգացմունքը
և եռանդը բորբոքեմք և զայնս յաշխարհ
ամենայն մեծապանծ և փառաւոր փայ-
լեցնեմք. և միթէ մեզ չէ ամօթ՝ երբ այս-
պիսի վսեմ պատերազմի և բարոյական
բարեհամբոյր և անձկալից զգացմանց մէջ
անտարբեր կը ծփամք. արդեօք կենդանի
պիտի համարուիմք մեք՝ երբոր Աստու-
ծոյ շնորհած ձիրքերը՝ միտքը՝ հոգին՝
զգացմունքը իբր ի Կերեղմանի եթէ պահ-
պանեմք, հաւատացէք՝ զի մեզապիսեաց
համար ոչինչ չկայ աշխարհիս մէջ, և թէ
ամենայն ինչ և բնութիւն մեռած է վասն
մեր, մինչդեռ մեք մեռած պէտք է համա-
րուիմք, և մեզ լաւ էր երբէք չծնանիլ՝
քան թէ երկրի խափանարար լինէինք. որ-
պիսեաց արդարեւ արժան է լսել այն երկ-
նային պատգամը՝ թէ «կտրեա՛ զգա»,
և թէ «արկէ՛ք ի գեհեան հրոյն», :

Հաւատեալ ասելով կը խոստովանիմք՝
որ մեր Հայոց ազգը և եկեղեցի ցարդ ընդ
հուր և ընդ ջուր անցանելով՝ բազում
ազէտից և թշուառութեանց տարած և
յաղթած է, որով այսօր ունի ստացած
և պահպանած իւր ազգութիւնը շնորհիւ

կրօնին և Ս. Ազգեղեցւոյն. բայց ի վերայ
այսր ամենայնի մահուչափ աննեղելի է
ծածկել և զայս, և պէտք է անշուշտ հա-
ւատամք՝ զի ներկայ դարուս մէջ առա-
ւել մեծ վտանգի մէջ համարելու եմք
զմեզ՝ ինչպէս որ եմք իրօք: Բայց պէտք
է վհատիմք և յուսահատուիմք: Պէտք է
նաեւ պարծենալ միայն նախնեօք և նոցա
սխրագործութեամբք: Այո՛ վհատութիւ-
նը և յուսահատութիւնը կենդանի և բա-
նական մարդու յատուկ չէ. և թէ յիշելու
եմք մեր ընտիր նախնիքը հանդերձ սխրա-
գործութեամբքն, և այսպէս ոգևորեալ՝
մեզ պէտք է առաջնորդէ հաւատոյ՝ յուսոյ
և սիրոյ դրօշակը դէպ ի բարի ապագայ,
դէպ ի կատարեալ և արդիւնալից յառա-
ջադիմութեան աշխարհ, յորում մեզը և
կաթն կը բղխին, որք մեզապիսի ծարա-
ւելոց միութարութիւն և պսակ կարեն լի-
նել: Բայց մինչև այն ժամանակ Արիքո-
վեան բուրգեր և աշտարակներ դէմ ընդ ա-
ռաջ կը լանեն մեզ, որոց յաղթել դժուար
չէ, բայց միայն լուսոյ՝ աստուածածանօ-
թութեան՝ ազգային դաստիարակութեան
միանգամայն մոտաւոր և բարոյական դե-
ղեցիկ և բարի կրթութեանց և զարգաց-
մանց փողերը հնչեցնելով մեր մէջ զրեթէ
ամենայն տեղ և միահամուռ, թող տապա-
նակը այսինքն մեր սուրբ և Վրիստոսա-
հիմն եկեղեցին ընդ մեզ լինի, ո՞վ իցէ մեր
հակառակ. Աստուած փշրեսցէ զոսկերս
թշնամեաց մերոյ:

Ար կնքեմ խօսքս՝ յիշելով թէ՛ Մար-
գարէն յոգւոց հանելով սրտամաշ կ'մոր-
մօքէր՝ կ'աղաղակէր և կը բողբոքէր առ
Աստուած՝ «օգարք յարեան ի վերայ իմ»,
քանի՜ առաւել մեզ Հայոցս ցրուելոյ

ընդ ամենայն աշխարհ պէտք է բացազան-
շեւ և զգուշանալ՝ որ օտարք շոքանակի
պատեալ պաշտօնեալ էն ղէպ, և որոց կո-
կորդ բաց է կլանել զմեզ՝ Քրիստոս. իբնի
անասնի խորհրտանելով:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆՏԻՑ ԱՆՏԵԼՈՑ ՍԵՎԱՆԱՅ ՎԱՆԻՑ.

(Շորանգի-ն և Վերջ)

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՎԻՄԱԳԻՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՏԱՃԼՐԱՑՆ Ս. ԱՆԱՊԱՏԻՆ
ՍԵՎԱՆՈՒ

Ի վերայ «եան հարաւային կողմն՝ յեկեղե-
ցոջն որք Մարտաշաթնի՝ գրի:

«Յամի Ռերորդի ճ'Պ.Ժաներորդի.
Շնորհօքն Մտուծոյ մեք հարազատ եղ-
բարքս Խօճայ Սուլիանս և Օլալս ի քա-
ղաքէն Տփիսեաց Եսքէն Չիթաղեանց որ-
դիք Թաղայի եկեալ ի Սուրբ Ենապատս
ի Սէվան ծովապատ, զոր ի բազում ժա-
մանակաց մեր կամաւ խոստացաք մեր ապ-
րանաց շահն Ժանորդ տանք Սէվանայ
Ենապատիս, զոր շինեցաք Սուրբ Մտու-
ածածինս Եկեղեցիս: Յիշատակ մի ար-
ծաթի կանթեղ, Խաչ, Բուրվառ, սկիհ,
յիշատակ հոգւոյս հօր մերոյ Թաղային,
մօր Բէկի Սուլթանին, եղբայր Պապի,
Օրորապին, քվերանց որդոց բաժինին:
«Եւ միաբանքս խոստացան տարէն Գ.

ժամ մատուցել: Պատարողք վարձաւոցն,
Ի Հայրապետութեան Տեառն Հակոբա,,
Ի վերայ Եկեղեցիէն «եմայ արեմալեան դրան
Եստո-տաշաթնի Տաճարին, արարտաւար *):

«Շնորհօքն Մտուծոյ նորոգեցաւ տա-
նիք սուրբ Մտուածածնի Եկեղեցւոյս, ի
Հայրապետութեան Տեառն Եփրեմի և
նորած Յովհաննու Պաթուղիկոսի, յա-
ռաջնորդութեան Յօհաննէս վարդապե-
տին, և աշխատանք բոլոր միաբանու-
թեանց, մանաւանդ՝ Պարապետ վարդա-
պետին, որ ի շինութեան մասին սպանաւ
յայլազգեաց ի ժողովարարութեան, որ ե-
լից վանս սգով, որք ընթեռնոյք, ողորմի
ասացէք: Յամի Տեառն 1832, և ի Թուա-
կանութեանս ՌՄՁԵ:,,

(Որպէս ասացին ի միաբանութեանս,
սպանեալ է դոյն Պարապետ վարդապետն ի
կողմանս Շաքւոյ յաւազակաց, ընդ աշ-
խահական սպասաւորին Համաքարերդ-
ցւոյ):

Ի վերայ Ժայտեայ «եան հաւ-նին նոյն Եկե-
ղեցոյ, որ գրեալ է ի վերայ Եղիշոյ և Կոս-
յեալ է ի նա:

«Յամի Տեառն 1836: Նորոգեցան ի
հիմանէ գաւիթս սուրբ Մտուածածնի,
և մէկ մեծ մառան . . . չորս օտայ, մէկ
երկար քուչայիւ, արդեամբ և ծախիւք
Լմեցի ծերունազարդ ի Քրիստոս հան-
գուցեալ Ստեփաննոս Ճգնազգեաց վար-
դապետին, որ նախ քան զվախճանն իւր՝
կտակաւ՝ աւանդեաց զծախսն այսոցիկ մի-

(*) Որպէս երևի զքարն արձանագրութեանս
յետոյ են կցեալ ընդ սեմոյն),